


Հայաստանի Հանրապետություն
«ՄՎ ՋՈՒՐ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻԻ ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՀՆԱՔԱՎԱՅՐԻ ԹԻՎ 6/64 ՀՈՐԱՏԱՆՑՔԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄՎ ՋՈՒՐ» ՍՊԸ տնօրեն՝

 Վ.Գևորգյան

« 16 » 03 2020թ.



Արգնի, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	4
2. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	5
3. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	8
3.1. Տեղադիրքը և ֆիզիկաաշխարհագրական պայմանները	8
3.2. Սոցիալ-տնտեսական պայմանները.....	17
3.2.1. Կոտայքի մարզ	17
3.2.2. Ազդակիր համայնք.....	20
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	20
4.1. Հանքավայրի պաշարները.....	20
4.2. Շինարարական աշխատանքներ.....	23
4.3. Շշայցման հանգույցի շահագործում.....	23
5. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ` ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	26
5.1. Զրոյական տարբերակ	26
5.2. Քննարկվող տարբերակներ.....	26
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	27
6.1. Ընդհանուր դրույթներ.....	27
6.2. Շինարարություն	28
6.3. Հանգույցի շահագործում.....	29
6.4. Սոցիալական ազդեցություն.....	31
6.5. Սանիտարական պահպանության գոտի.....	31
6.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն.....	33
7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	34
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ.....	35
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԱԻԱԼԱՆ ՄԵՂՂՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	38
9.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ.....	38

9.2. Հիդրոտերկրաբանական մշտադիտարկումների (մոնիթորինգի) իրականացման պլան 40	
9.3. Սոցիալական մեղմման միջոցառումներ	42
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	44
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	46
Հավելվածներ. տեղեկանքներ, գծագրեր, քարտեզներ	48

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

“ՄՎ ՋՈՒՐ” ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել հանքային ջրի շշալցում: Այդ նպատակով ընկերությունը դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ստանալու ՀՀ Կոտայքի մարզի Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով, 50 տարի ժամկետով: Պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.5 լ/վրկ կամ 15768.0 մ³/տարի:

“ՄՎ ՋՈՒՐ” ՍՊԸ-ն հանքային ջրի շշալցման գործընթացը կիրականացնի “Արզնի առողջարան” ՓԲԸ հարակից տարածքում գտնվող արտադրամասում, որի մակերեսը 450մ² է: Այն գտնվում է շահագործման համար նախատեսվող թիվ 6/64 հորատանցքից 700.0 մ հեռավորության վրա:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման ու շշալցման համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Ընկերությունը շշալցման գործընթացը կազմակերպելու համար օգտվելու է “Արզնի առողջարան” ՓԲԸ տարածքում գտնվող հանքային ջրի ըմպելասրահ թիվ 6/64 հորատանցքից տանող 2 դյույմանոց տրամագծի պլաստմասյա (խմելու որակի) խողովակաշարից, որտեղից ճյուղավորում կկատարվի դեպի հանքային ջրի շշալցման արտադրամաս և ըմպելասրահ: Հեռավորությունը ճյուղավորման տեղից մինչև շշալցման արտադրամաս և ըմպելասրահ կազմում է համապատասխանաբար՝ 70.0մ և 65մ:

Ընկերության շշալցման արտադրամասը համալրված կլինի ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով: Արտադրամասի բոլոր անհրաժեշտ սարքավորումները ձեռք են բերվել Չինաստանից:

Նախատեսվում է հանքային ջրի շշալցման արտադրամասում տեղադրել շշալցման մեկ հոսքագիծ (պլաստմասյա տարաներում շշալցման համար), որի արտադրողականությունը ժամում կկազմի՝ 3000 հատ 1.0 լիտրանոց շիշ:

Ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման, ջրհավաք հորատանցքի շահագործման և այլ անհրաժեշտ աշխատանքների համար ընկերության կողմից կատարվելու է 106 410 000 դրամի ներդրում, որից արդեն իսկ կատարվել է

60 000 000 դրամի ներդրում, և համայնքում ստեղծվելու է մոտ 15 աշխատատեղ 200000.0 դրամ միջին աշխատավարձով: Բացի դրանից ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար:

Ընկերությունը ստանալով Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի ջրի արդյունահանման (շշայցում) իրավունք և իրականացնելով արդյունահանում՝ կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի մի քանի տասնյակ աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի Կոտայքի մարզի Արզնի համայնքի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

2. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի համար անվտանգ և սոցիալապես ընդունելի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների նախագիծը և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պետք է կազմվի ՀՀ բնապահպանական բնագավառի իրավական ակտերով սահմանված պահանջների և նորմերի համաձայն: Այդպիսի նորմատիվ պահանջներ ներկայացված են հետևյալ իրավական ակտերում.

1.ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

2.ՀՀ Ջրային օրենսգիրք, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

3.ՀՀ Հողային օրենսգիրք, որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և

բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4. ՀՀ Անտառային օրենսգիրք, որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

5. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք, որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

7. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք», որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն սույն օրենքի 14-րդ հոդվածի՝ «հանքային կամ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործումը՝ ձեռնարկատիրական նպատակով» դասվում է «Ա» կատեգորիայի գործունեությունների շարքին և ենթակա է փորձաքննության երկու փուլով:

8. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք, որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

9. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),

10. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

Ինչպես նաև այս օրենքներից բխող այլ ենթաօրենսդրական ակտեր, որոցից հմնականում.

- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:
- «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշում
- ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 1480-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:
- ՀՀ առողջապահության նախարարի 29 նոյեմբերի 2002 թ. N 803 հրաման, որը սահմանում է «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների» սանիտարական կանոնները և նորմերը:
- ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների

վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

- Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:

3. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Տեղադիրքը և ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Ընդհանուր տեղեկություններ. Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան տարածաշրջանի Արգնիի առողջարանի տարածքում, Երևանից 24 կմ դեպի հյուսիս՝ Հրազդանի կիրճում, գետի ձախ ափին (տե՛ս նկար 1):

Տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ առողջարարական նպատակներով նախատեսված: (տես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ՀՀ վկայականը): Արդյունահանման իրավունք ստանալուց հետո սահմանված կարգով կիրականացվի հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն:

Թիվ 6/64 հորատանցքը գտնվում է Հրազդան գետի կիրճի ձախ ափին, Արգնիի առողջարանի տարածքում, 1/62 հորատանցքից 24.0 մ դեպի հյուսիս (տե՛ս իրավիճակային հատակագիծը):

Թիվ 6/64 հորատանցքի կոորդինատներն են՝

I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների Համակարգով	
1. X = 4464260	Y = 8465250	1. X = 4464253	Y = 8465148

Հորատանցքի բացարձակ բարձրությունը – 1280.0մ:

Չարենցավան և Հրազդան քաղաքների միջով է անցնում Երևան-Սևան երկաթգիծը: Հանքավայրի մոտակայքից է անցնում բարեկարգ ասֆալտապատ Երևան-Սևան-Նոյեմբերյան մայրուղին:

Մոտակա երկաթգծի կայան է հանդիսանում ք.Աբովյանը, որն հանքավայրից գտնվում է 5.0 կմ հեռավորության վրա:

Նկար 1. Իրադրային սխեմա



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ① Արգնի առողջարան
- ② Շշալցման արտադրամաս
- ③ Ըմպելասրահ
- ④ 2"-ոց առաջնային խողովակ
- ⑤ 2"-ոց առանձնացված խողովակ

Նկար 1

Երկրաձևաբանություն. Հրազդան գետի երկու ավերին, տարածվում են Կոտայքի և Եղվարդի թույլ մասնատված լավային սարավանդները, որոնց հետ է կապված Արզնի առողջարանի շրջանը: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300 մետր բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700-1800 մետր բարձրության վրա):

Այդ երկու սարավանդներն իրարից բաժանված են Հրազդան գետի խորը կիրճով, որն ունի խիստ մասնատված երոզիոն-կառուցվածքային ռելիեֆ: Կիրճի միջին խորությունը 100.0մ է, իսկ լայնությունը՝ 0.5–1.0կմ: Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջի սահմաններում:

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-աձև կիրճերով և ձորակներով:

Թեք և անտառագուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները:

Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1270.0-1290.0 մ սահմաններում:

Հանքավայրի տարածքում բացակայում են սողանքային երևույթները:

Ջրային ռեսուրսներ. Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից՝ Հրազդանը, Գետառը, Ագատը ունեն ոռոգիչ նշանակություն:

Հրաբխածին-նստվածքային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ագատ գետերի կիրճերում:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը Հրազդան գետն է, որը սկիզբ է առնում Սևանա լճից և թափվում է Արաքս գետ: Գետի երկարությունը 146.0 կմ է:

Լճից բաց թողնվող ջրի քանակը կարգավորվում է: Գետի ջրերը օգտագործվում են էներգետիկ նպատակով, կառուցվել է ՀԷԿ-երի կասկադ: Հրազդանի վրա կառուցված են նաև ջրամբարներ, որոնցից առավել խոշոր են Երևանյան լիճը և Հրազդանի ջրամբարը՝ Հրազդան քաղաքում: Գետից սնվում են մի շարք ջրանցքներ, որոնց միջոցով ոռոգվում են Արարատյան դաշտի հողերը:

Հրազդան գետի վտակներից են Բջնի, Դալար, Գետառ գետերը:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” ՊՈԱԿ 2018 թվականի տեղեկագրի

Հրագրանի ջրավազանային կառավարման տարածքի գետերի աղտոտվածությունը հետևյալն է.

- Հրագրան գետի Գեղամավանի մոտ հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս):
- Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):
- Մարմարիկ գետի Հանքավանից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» որակի է (5-րդ դաս):
- 0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ «վատ» որակի է (5-րդ դաս):



Նկար 2

Մթնոլորտային օդ. Արգնի բնակավայրում օդային ավազանը աղտոտող արդյունաբերական ձեռնարկություններ չկան: ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն», ՊՈԱԿ-ի («Հայէկոմոնիթորինգ») կողմից:

Արգնի բնակավայրում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ «Հայէկոմոնիթորինգ»-ում տվյալներ չկան: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Հայէկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց¹: Ըստ այդ նուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են²

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Կլիմա. Շրջանի կլիման բնութագրվում է մեղմ մայրցամաքային կլիմայով՝ խիստ ամառ և ձմեռ ունեցող կլիմա:

Շրջանի կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 °C-ից մինչև 2.5 °C:

Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5 °C: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6 °C:

Կոտայքի մարզի բարձրադիր շրջաններում ամառվա ամենատաք ամսին գրանցվում է միջինում 8.7 °C ջերմություն: Ցածրադիր շրջանների եղանակային պայմանները բավականին տարբեր են: Միջին հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը ցածրադիր գոտիներում կազմում է 22.2 °C և ավելի:

Ամենացածր ջերմաստիճանը Կոտայքի մարզում գրանցվում է Աժդահակ լեռան գագաթին:

¹ EIMC N 15-1/14 ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին. Տեղեկանք, օդային ավազան, էջ 22

² ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» նուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է՝ 400-970 մմ: Տարբեր ամիսներին տեղում է անձրև, կարկուտ, իսկ ձմեռային ամիսներին՝ ձյուն:

Անսառնամանիք օրերի թիվը մարզի ստորին գոտում կազմում է շուրջ 200 օր:

Ամենուր դիտվում են լեռնահովիտային քամիներ: Օդի բազմամյա միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 67.0%:



Նկար 3

Հողաբուսական ծածկույթ. Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և

լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալայան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային վայրերը:

Հանքավայրի տարածքը գտնվում է լեռնատափաստանային լանդշաֆտային գոտու սահմաններում, որին բնորոշ են լեռնաշագանակագույն հողերը (տես՝ նկարներ 4 և 5):

Այս հողերը ձևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում, հումուսով ավելի հարուստ են (4-5%), ունեն ավելի հզոր շերտ (40-50 սմ): Դրանք պիտանի են հացահատիկների մշակման, ծխախոտագործության, պտղաբուծության ու այգեգործության, ինչպես նաև մերձարևադարձային բույսերի (թզենի, նոնենի, ձիթենի) աճեցման համար: Այս հողերում մշակում են հացահատիկային, բանջարաբուստանային բույսեր, պտղատու ծառեր:

Բուսականության տեսակային կազմի տարածքային տարբերությունը համընկնում է կլիմայի և հողերի վերընթաց գոտիականությանը:

Տափաստանային գոտու բուսականությունը մեր հանրապետությունում տարածված է 1400-2400մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է փետրախոտային, սիզախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի-տարախոտային բուսականությունը: Տափաստանային գոտու վերին սահմանին մոտ, որտեղ խոնավությունը բավարար է, աճում են մերձալպյան բարձրախոտերը: Այս տարածքները լավ խոտհարքեր են:

Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին աճում են հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն:

Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:



Նկար 4



Նկար 5

Կենդանական աշխարհը. Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Կոտայքի մարզի ՄՎ ՋՈՒԻ ՍՊԸ Հանքային ջրի շշայլցում ՇՄԱԳ

կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Տարածաշրջանի տարբեր մասերում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, եղջերու, նապաստակ և այլն:

Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, իլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը: Թռչուններից նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփրուկը, որոնք սնվելով մշակաբույսերին վնասող միջատներով՝ մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ. Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի տարածքը, ինչպես նաև մերձակա տարածքները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր: Հանքավայրի տարածքում նախնական դիտարկումների արդյունքում չեն արձանագրվել կենդանիների և թռչունների բներ, ծածկույթներ: Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գործնականում զրոյական է:

Հանքավայրի տարածքում բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն:

3.2. Սոցիալ-տնտեսական պայմանները

Ներկայացվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում Արգնին:

3.2.1. Կոտայքի մարզ

Արգնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի Արգնի համայնքի վարչական տարածքում: Միակ մարզն է, որը միջպետական սահման չունի Հայաստանի հարևան որևէ պետության հետ: Կոտայքը

միաժամանակ նաև այն չորս մարզերից մեկն է, որոնք անմիջապես հարում են մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերեսույթից մոտ 900 - 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45 կմ է:

Կոտայքի մարզը զբաղեցնում է 2089 կմ² տարածք:

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Մարզկենտրոնն է քաղաք Հրազդանը: Մարզի երկրորդ քաղաքը Աբովյանն է: Այն ստեղծվել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Այստեղ ստեղծվել են աշխատատար ճշգրիտ մեքենաշինության, հատկապես էլեկտրոնային սարքաշինության հզոր ձեռնարկություններ, որոնք, սակայն, ներկայումս չեն աշխատում: Չարենցավանը հայտնի է որպես մեքենաշինության, Արզնին՝ հանքային ջրերի արտադրության ու առողջարանային, Նոր Հաճնը՝ սարքաշինության ու թանկարժեք քարերի մշակման, Եղվարդը՝ թեթև և սննդի արդյունաբերության, Բյուրեղավանը՝ ապակե տարաների և հախճապակու արտադրության, Ծաղկաձորը՝ հանգստի կազմակերպման կենտրոն:

Կոտայքի մարզի տնտեսության գերակա ճյուղերը երկուսն են՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Արդյունաբերության արտադրանքը ծավալով երկու անգամ գերազանցում է գյուղատնտեսությանը: Արդյունաբերական արտադրանքի ծավալով երկրորդն է (Սյունիքի մարզից հետո): Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էլեկտրաէներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում Սևան-Հրազդան կասկադի վեց կայաններից երեքը և Հրազդանի՝ հանրապետության խոշորագույն ջերմաէլեկտրակայանը: Այստեղից են սկսվում հանրապետության բարձր լարման գլխավոր էլեկտրահաղորդման գծերը և էլեկտրաէներգիան փոխանցվում է հանրապետության տարածքով մեկ:

Արդյունաբերության առաջատար ճյուղերից են էներգետիկայի, մեքենաշինական և սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, շինանյութերի (ցեմենտի) և փայտամշակման ոլորտները:

Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը բավարարում է հայաստանյան շուկայի ներքին պահանջները, իսկ մի մասն էլ արտահանվում է արտասահման՝

Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, Վրաստան, Բուլղարիա, Իրանի Իսլամական Հանրապետություն:

Տնտեսության զարգացման հեռանկարները կապված են մշակող արդյունաբերության աճի, հանքային հարստությունների շահագործման և մերձերևանյան գոտում գյուղատնտեսական արտադրանքի ավելացման հետ: Հայաստանի Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս է հասցրել նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ: Կոտայքի մարզի կայուն զարգացող ոլորտներից է էներգետիկ արդյունաբերությունը: Դրա երաշխիքներն են 17 հիդրոէլեկտրակայանների և «Հրազդան-5» էներգաբլոկի առկայությունը:

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հայաստանի այս մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: 2012 թ. Կոտայքի հողային ֆոնդը կազմել է 84283 հա, որից վարելահող՝ 14569 հա, խոտհարք՝ 3162 հա, արոտավայր՝ 26469 հա, խաղողի և պտղատու այլ այգիներ՝ 5059 հա, այլ (գյուղատնտեսության մեջ չօգտագործվող) հողեր՝ 27611 հա, անտառներ՝ 6479 հա:

Կոտայքն առանձնանում է նաև իր ռեկրեացիոն ռեսուրսներով, որոնց օգտագործման շնորհիվ զարգանում է բնակչության հանգստի կազմակերպման ճյուղը: Այստեղ են գտնվում Արզնի և Հանքավան առողջարանները (հանքային աղբյուրների մոտ), Մարմարիկի առողջարանային գոտին՝ հանգստի ու առողջարանային բազմաթիվ ճամբարներով: Այստեղ է նաև Ծաղկաձորի մարզական օլիմպիական համալիրը, որտեղ թե՛ ձմռանը և թե՛ ամռանը հանգստանում կամ իրենց սպորտային վարպետությունն են կատարելագործում մեծաթիվ այցելուներ Հայաստանի տարբեր մարզերից ու արտասահմանից:

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ կրոնական կառույցներ, հայտնի անձանց տուն-թանգարաններ, խաչքարեր և այլն: Մարզում գրանցված են ավելի քան 2024 պատմամշակութային արժեքներ և հուշարձաններ:

Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում են գտնվում Հայաստանի ամենաշատ այցելվող պատմամշակութային կառույցներից երկուսը՝ Գառնու տաճարը և Գեղարդի վանքը:

Գառնու տաճարը՝ կառուցված է Արևի աստված Միհրի պատվին, մ.թ. 1 -ին դարում: Գեղարդի վանքի հիմնադրումը վերագրվում է 3-4դդ. Գրիգոր Լուսավորչին: Հոգևոր-մշակութային նշանավոր կառույց է Բջնիի բերդը՝ 1031թ. կառուցված սբ. Աստվածածին եկեղեցիով:

3.2.2. Ազգակիր համայնք

Արզնի ազգակիր համայնքը հիմնադրվել է 1829թ.: Նախկինում կոչվել է Արծնի, Սարջալա, ասորաբնակ լինելու համար կոչվել է նաև Արզնի-Ասորիք: Հայտնի է եղել որպես գուտ հայկական գյուղ:

Ներկայումս գյուղը հայտնի է որպես առողջարանային գոտի, որտեղ գործում են 5 առողջարաններ: Վերջիններում հիմնականում բուժվում են աղեստամոքսային տրակտի, սրտի իշեմիկ և ռևմատիկ հիվանդություններ: Գյուղից ոչ հեռու գտնվում է Արզնի ՀԷԿ-ը:

Համայնքի մակերեսը կազմում է 1884,6 հա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 18 կմ: Համայնքի բնակչության թիվը կազմում է 2998 մարդ, ապրում են հայեր, ասորիներ, եզդիներ: Համայնքում գործում է միջնակարգ դպրոց: Համայնքը չունի մշակութային և մարզական հաստատություններ: Համայնքում գործում են «Արզնու ՏԹՏԻ» ԲԲ և «Բեկոն Պրոդուկտ» ՍՊ ընկերությունները: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է և անասնապահությունը:

Հոգևոր-մշակութային նշանավոր կառույցներից են 7-րդ և 14-րդ դարի եկեղեցիները: Պատմամշակութային հուշարձաններից են՝ 1941-1945 թ.թ. հայրենական մեծ պատերազմի և 1915թ. անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Հանքավայրի պաշարները

Արզնիի տեղամասի հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով որոնողա-հետախուզական և հետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվել են ինչպես հորատման, այնպես էլ համալիր հիդրոերկրաբանական փորձնական աշխատանքներով, կատարվել են 1962-1966թթ.-ին, ինչպես նաև 1999-2001թթ.-ին՝ ռեժիմային հիդրոերկրաբանական դիտարկումների հիման վրա պաշարների վերագնահատման նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները 01.07.1966թ.-ի դրությամբ հաստատվել են 27.05.1967թ.-ին նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից (ՊՊՀ) (արձանագրություն N5164) և 01.01.2002թ.-ի դրությամբ և վերահաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալության (ՕՀՊԳ) կողմից 30.06.2003թ.-ին (արձանագրություն թիվ12,) երեք կապտաժային հորատանցքերով (1/62, 3/62 և 6/64) և կարող են օգտագործվել շշայցման, բուժման (հոր. 1/62, 3/62 և 6/64) և ազատ ածխաթթու գազի կորզման համար (հոր. 1/62):

Հանքային ջրի շահագործողական պաշարները կազմում են 19.14լ/վրկ կամ 1654.0 մ³/օր, իսկ ազատ ածխաթթու գազի պաշարները՝ 4.5 մ³/մ³ կամ 6.4 գ/լ, այդ թվում՝

Հանքային ջրի պաշարներ՝

1/62 հորատանցքով - B կարգի՝ 5.0 լ/վրկ կամ 432.0 մ³/օր,

3/62 հորատանցքով - B կարգի՝ 7.12 լ/վրկ կամ 615.0 մ³/օր,

6/64 հորատանցքով - B կարգի՝ 7.02 լ/վրկ կամ 607.0մ³/օր:

Ազատ ածխաթթու գազի պաշարները՝

1/62 հորատանցքով - B կարգի՝ 5.1 գ/լ կամ 3.6 մ³/մ³,

3/62 հորատանցքով - B կարգի՝ 1.0 գ/լ կամ 0.7 մ³/մ³,

6/64 հորատանցքով - B կարգի՝ 0.3 գ/լ կամ 0.2 մ³/մ³:

Հանքային ջրերը կապված են Հրազդան գետի հին հովտի էֆֆուզիվ ալյուվիալ կոմպլեքսի հետ:

Հանքավայրի հիմնական ջրատար արդյունաբերական գոտին, որի հանքային ջրերը բավարարում են կոնդիցիայի պահանջներին, հայտնաբերվել են 46.0-80.0մ միջակայքում և ներկայացված են խարամով, հրաբխային ավազով, ճեղքավորված պիրոկլենային անդեզիտաբազալտներով:

Արզնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO₂-97.0-99.8%), թույլ թթվային (pH-6.4-6.6): Ըստ քիմիական կազմի քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային են՝ 5.4-14.5գ/լ հանքայնացումով և 16.4-21.0°C ջերմաստիճանով:

Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.7-1.8գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 0.3-5.1գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են «Геоминвод», ЭПП «Армминводы» и ООО «Акфар» լաբորատորիաներում:

Հանքավայրի ջրերը կարելի է հաջողությամբ օգտագործել շշայցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման համար:

Թիվ 6/64 հորատանցքը գտնվում է Հրազդան գետի կիրճի ձախ ափին, Արզնիի առողջարանի տարածքում, 1/62 հորատանցքից 24.0 մ դեպի հյուսիս (տե՛ս իրավիճակային հատակագիծը):

Թիվ 1/62 գտնվում է Հրազդան գետի կիրճի ձախ ափին, Արզնիի առողջարանի լոգարանի շենքից դեպի հյուսիս-արևելք 39.5մ հեռավորության վրա, իսկ թիվ 3/62՝ 1/62 հորատանցքից 57.0մ դեպի հյուսիս-արևմուտք:

Թիվ 6/64 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 7.02լ/վրկ, հանքայնացումը՝ 5.4-6.5գ/լ, ջերմաստիճանը՝ 16.4°C: Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.6-1.8գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 0.2-0.4գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային է: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որն համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 50.0-67.0մ խորության վրա:

«ՄՎ ՋՈՒԲ» ՍՊԸ-ն ցանկանում է ստանալ Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով, 50 տարի ժամկետով:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.5 լ/վրկ կամ 15768.0 մ³/տարի:

Ստորև ներկայացված է հանքավայրի թիվ 6/64 ջրհավաք հորատանցքի կտրվածքը (տե՛ս աղյուսակը):

Շերտի տեղադրման խորությունը, մ		Շերտի հզորությունը, մ	Ապարների նկարագրությունը	Ջրատար միջակայքի տեղադրման խորությունը, մ
սկիզբը	վերջը			
0.0	5.0	5.0	Տրավերտին, դեղին գույնի	
5.0	15.0	10.0	Դելյուվիալ նստվածքներ՝ ներկայացված բազալտների բեկորներով	
15.0	28.0	13.0	Մուգ գորշ գույնի մանրահատիկ դոլերիտային բազալտներ: 20.0-31.0 միջակայքում խիստ ձեղքավորված, ծակոտկեն	
28.0	30.5	2.5	Գետաքարա-քարաբեկորային նստվածքներ՝ ներկայացված բազալտների բեկորներով, ավազակավային լցոնով	
30.5	33.0	1.5	Մուգ գորշ գույնի պիրոկսենային անդեզիտաբազալտներ, բյուրեղային,	31.0-49.0 քաղցրահամ

			ծակոտկեն	
33.0	34.3	1.3	Խարամ և հրաբխային ավազ	
34.3	49.0	14.7	Մուգ գորշ գույնի պիրոկսենային անդեզիտաբազալտներ, ճեղքավորված,	
49.0	57.4	8.4	Խարամ և հրաբխային ավազ	50.0-67.0 հանքային
57.4	67.0	9.6	պիրոկսենային անդեզիտաբազալտներ, ճեղքավորված,	

4.2. Շինարարական աշխատանքներ

Ինչպես նշվել է սույն հաշվետվության առաջին գլխում, շշալցման համար նոր շինության կառուցում և ենթակառուցվածքի տեղադրում չի պահանջվում:

Նոր հանքային ջրագիծ նույնպես չի պահանջվելու և շինարարական աշխատանքները կապված են լինելու միայն հանքային ջրի ըմպելասրահ թիվ 6/64 հորատանցքից տանող 2 դյույմանոց տրամագծի խողովակից կատարել ճյուղավորում դեպի հանքային ջրի շշալցման արտադրամաս և տեղադրել նույն տրամագծի պլաստմասյա խողովակ:

Այդ նպատակով նախատեսվում է փորել 70 մ երկարությամբ խրամատ, որում կտեղադրվի նախատեսվող պլաստմասյա խողովակը: Կկատարվեն միացումներ գործող խողովակի և գոյություն ունեցող շինության մեջ տեղադրվող հոսքագծին:

Հոսքագիծը արդեն իսկ տեղափոխված է նախատեսվող շշալցման արտադրամասի տարածք: Սարքավորման հավաքումը կիրականացվի ձեռքով կամ փոքր ամբարձիչով:

4.3. Շշալցման հանգույցի շահագործում

Ջրհավաք հորատանցքի շահագործումը կիրականացվի փակ ռեժիմով, այսինքն՝ ջրհավաք հորատանցքի գլխամասը և ջրագիծը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Նշված աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն «Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման ու կնքման կարգը, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի

ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգն ու ժամկետները հաստատելու մասին» որոշման պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում արտանետումներով ու ընդերքօգտագործման թափոններով: Դրա մասին է վկայում ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը, որը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա: Բանն այն է, որ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերի շահագործումը սկզբունքորեն տարբերվում է պինդ օգտակար հանածոների (մետաղական, ոչ մետաղական) հանքավայրերի շահագործումից: Ոլորտին քաջածանոթ յուրաքանչյուր մասնագետ կփաստի, որ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերը բնական միջավայրի վրա բացասական ազդեցության ռիսկեր գրեթե չունեն, ի տարբերություն մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի, որոնց շահագործման ընթացքում արձանագրվել և այսօր էլ արձանագրվում են շրջակա միջավայրի, էկոհամակարգի վրա բազմաթիվ բացասական հետևանքներ: Դա պայմանավորված է ամենից առաջ հանքավայրերի բնույթով և դրանց շահագործման առանձնահատկություններով: Ինչը երբեմն անտեսվում է գնահատականներ ներկայացնելիս: Հաշվի առնելով նաև այն, որ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործման երկարատև փորձի ընթացքում չեն արձանագրվել կամ փաստվել շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցության մասին տվյալներ, դա ևս հերթական փաստն է կամ տվյալը դրանց շահագործման էկոլոգիական ռիսկերի բացակայության:

Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում նախատեսվող աշխատանքների կատարման և ջրհավաք հորատանցքի շահագործման ժամանակ որևիցե տեխնածին ճնշումներ Արգնիի բնակավայրի շրջակայքի մթնոլորտի, մակերևութային ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի, կենսաբազմազանություն, լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվելու, քանի որ`

- փոշու և վնասակար ծխագազերի արտանետումներ չեն կատարվելու,
- ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ (տե՛ս հանքային ջրի ջրհավաք հորատանցքի գլխամասի սխեման), ինչը թույլ կտա բացառել հարակից տարածքների հողերի աղտոտումը,
- ջրհավաք հորատանցքը կահավորված է վերերկրյա կառույցով և իրականացվել է հորատանցքի բերանի շուրջը ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը բացառում է մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

- ջրհավաք հորատանցքի շուրջ կառուցված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի՝ հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

«ՄՎ ՋՈՒՐ» ՍՊԸ ընտրել է նշված հանքավայրից հանքային ջրի արդյունաբերական շշալցման տարբերակը՝ շրջակա միջավայրի հետ կապված բնապահպանական ռիսկերը առավելագույնս բացառելու և սոցիալական ու տնտեսական արդյունքներ ապահովելու նպատակով: Հանքային ջրի արդյունահանումը չի ուղեկցվելու արտանետումներով, վնասակար թափոններով (հետևաբար հիմքեր չկան խոսելու դրանց կազմի, ծավալի, օգտագործման, վերամշակման և պահեստավորման հետ կապված այլ բնութագրերի մասին), որոնք կարող են վտանգավոր լինել շրջակա միջավայրի համար, ունենալ բնապահպանական ռիսկեր, ինչը, ինչպես արդեն նշել ենք, չի կարելի ասել պինդ օգտակար հանածոների (մետաղական, ոչ մետաղական) հանքավայրերի շահագործման դեպքում: Սա ամենից առաջ պայմանավորված է հանքավայրի և համապատասխան բնական ռեսուրսի արդյունահանման առանձնահատկությամբ: Թեպետ հանքային ջրի արդյունահանումն ինքնին չի ուղեկցվելու արտանետումներով և վնասակար թափոններով, այնուամենայնիվ չի կարելի բացառել շշալցման ընթացքում արտադրական խոտանների (վնասված տարաներ և այլն) հնարավորությունը, որոնք ոչ պատշաճ ուշադրության դեպքում կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Սակայն դրանք կչեզոքացվեն և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը հնարավորինս կբացառվի, քանզի դրանք համապատասխան փաթեթավորմամբ կառանձնացվեն և պատշաճ ձևով կիրականացվի աղբահանությունը: Ավելին, հանքավայրի շահագործումը չի ուղեկցվելու, օրինակ, աղմուկով, որը որևէ կերպ կարող է անհանգստացնել ազդակիր համայնքի բնակիչներին (հանքավայրը գտնվում է այդ համայնքից մոտ 1.3 կմ հեռավորության վրա): Մոտավորապես 100 մ հեռավորության վրա են «Արզնի առողջարան»-ի հիմնական մասնաշենքերը, սակայն հանքավայրի շահագործումն ու շշալցումը չեն վտանգի առաջողջարանի այցելուների հանգիստն ու առողջությունը: Հավելենք, որ շշալցման արտադրամասն իր օժանդակ շինություններով առանձնացված է 3.0մ բարձրություն ունեցող քարե պատնեշով: Ավելին, «Արզնի առողջարան»-ՓԲԸ-ն ներկայացրել է տեղեկանք (կցվում է հաշվետվությանը), որի համաձայն՝ հանքավայրի շահագործումը չի առաջացնի որևէ խնդիր պատրաստի արտադրանքի տեղափոխման համար օգտագործվող հանրային ճանապարհների, երթևեկության լրացուցիչ բեռնվածության, մուտքի սահմանափակման, առողջարանի այցելուների և անձնակազմի վրա աղմուկի, աշխատանքի անվտանգության և այլնի հետ կապված (քանի որ չկան ռիսկեր, չկա մեղմացման միջոցառումների անհրաժեշտություն): Իսկ սա իր հերթին ևս մեկ անգամ

վկայում է, որ հանքավայրի շահագործումն ու հանքային ջրի շշալցումը չեն կարող ունենալ բացասական ազդեցություն առողջարանային գործունեության վրա:

5. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

5.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և նախատեսվող շշալցման հանգույցը չի շահագործվում: Այս դեպքում՝

- Հանգույցի շահագործման հետ կապված նոր բնապահպանական և սոցիալական ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից հաշվի առնելով սույն հաշվետվությունում բերված հիմնավորումները նախատեսվող գործունեության ազդեցությունը այնքան փոքր է, որ գործնականում չի տարբերվում զրոյական տարբերակի պայմաններից:

Հաշվի առնելով, որ հանքային ջրի հորատանցքը ինքնաշատրվանող է, ապա նախատեսվող տարբերակից հրաժարման դեպքում օգտակար հանքային ջուրը աննպատակ կհոսի:

5.2. Քննարկվող տարբերակներ

Ըստ էության գրեթե բացառելով նախատեսվող գործունեությունից հրաժարվելու տարբերակը՝ «ՄՎ ՋՈՒԲ» ՍՊԸ-ն նպատակադրված է գործարանի շշալցման արտադրամասի տարածքում կազմակերպել հանքային ջրի շշալցման գործընթացը՝ դրա համար իրականացնելով գործարանի տարածքի վերանորոգում, բարեկարգում և համապատասխան սարքավորումներով և տեխնիկայով կահավորում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում կբարելավվի տարածաշրջանի և ազդակիր համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը: Այդ համայնքների բնակչության եկամուտները կավելանան՝ շնորհիվ աշխատատեղերի և հանքարդյունահանման աշխատակիցներին իրենց արտադրած գյուղատնտեսական մթերքների վաճառքի արդյունքում:

Որպես այլընտրանքային տարբերակ դիտարկվել է հանքային ջրի հորատանցքի հաստատված պաշարների օգտագործումը բուժիչ նպատակներով, ստեղծելով ռեկրեացիոն գոտի հանքային ջրի հորատանցքի շուրջ: Մակայն այս տարբերակը կապված է մեծածավալ ներդրումների հետ, որի հնարավորությունը ընկերությունը չունի:

Հարկ է նշել, որ «Արզնի առողջարան» ՓԲԸ-ն հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից 0.23լ/վրկ կամ 7250.3մ³/տար. քանակի հանքային ջրի արդյունահանում իրականացնում է բուժական նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիրառվող տեխնոլոգիական գործընթացները բավականին արդյունավետ են, նոր կառուցապատման աշխատանքներ չեն իրականացվելու, շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն չի ունենա, ուստի ընկերության կողմից այլ տարբերակներ չեն դիտարկվել:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1. Ընդհանուր դրույթներ

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Շրջակա միջավայրի պահպանությունը շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական հետևանքների կանխորոշման, կանխման, նվազեցման, սահմանված պահանջներին համապատասխան բնակչության առողջության, բնականոն կենսագործունեության և բարեկեցության ապահովման միջոցառումների համալիր է:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են՝ շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասազերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի վրա բնածին, տեխնածին և մարդածին ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծություն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Էկոանվտանգությունը դիտվում է որպես անհատի, հասարակության, բնության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության ապահովման գործընթաց իրական և հնարավոր սպառնալիքներից, որոնք գոյանում են շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն, կամ բնական ազդեցության հետևանքով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման

դեպքում իրականացվում են մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության համատեքստում բնական միջավայրը՝ շնորհիվ մարդկանց գիտակից ու պատասխանատու վերաբերմունքի, կարող է բարելավվել (օր.՝ ծառատունկ, ոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, իսկ անպատասխանատու վերաբերմունքի դեպքում՝ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ներկայացվող գործունեության ազդեցությունը լիարժեք գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել շշայցման հանգույցի շինարարության, շահագործման և փակման փուլերը:

6.2. Շինարարություն

Արդեն նշվել է, որ ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման ու շշայցման համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Ընկերությունը շշայցման գործընթացը կազմակերպելու համար օգտվելու է «Արգնի առողջարան» ՓԲԸ տարածքում գտնվող թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի ըմպելասրահ տանող 2 դյույմանոց տրամագծի պլաստմասյա (խմելու որակի) խողովակաշարից, որտեղից ճյուղավորում կկատարվի դեպի հանքային ջրի շշայցման արտադրամաս և ըմպելասրահ: Հեռավորությունը ճյուղավորման տեղից մինչև շշայցման արտադրամաս և ըմպելասրահ կազմում է համապատասխանաբար՝ 70.0մ և 65.0մ:

2 դյույմանոց տրամագծի պլաստմասյա (խմելու որակի) խողովակի տեղադրում գետնի տակով ըմպելասրահ տանող խողովակաշարի ճյուղավորման տեղից դեպի հանքային ջրի շշայցման արտադրամաս: Հեռավորությունը ճյուղավորման տեղից մինչև շշայցման արտադրամաս կազմում է 70.0մ: Հողային աշխատանքների ծավալը կկազմի՝ $70.0մ \times 0.3մ \times 0.6մ = 12.6 մ^3$: Հողաբուսաշերտի հզորությունը միջինը կազմում է 0.2մ, իսկ հողաբուսաշերտի ծավալը կկազմի՝ $70.0մ \times 0.3մ \times 0.2մ = 4.2մ^3$:

Հաշվի առնելով, որ հողային աշխատանքները կիրականացվեն մի քանի օրվա ընթացքում, հողաբուսաշերտը կտեղադրվի խրամատի եզրով և աշխատանքների ավարտից հետո անմիջապես կօգտագործվի բարեկարգման և ռեկուլտիվացման աշխատանքներում:

6.3. Հանգույցի շահագործում

Հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, քանզի թիվ 6/64 հորատանցքում ազատ գազի պարունակությունը հանքային ջրում կազմում է ընդամենը 0.3 գրամ 1 լիտրում: Ազատ ածխաթթու գազը ընկերությունը կզննի Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրից, որտեղ տարբեր ընկերությունների կողմից իրականացվում է ազատ ածխաթթու գազի կորզում ու կատարվում է 40.0 լիտրանոց բալոնների լիցքավորում, որի յուրաքանչյուրի տարողությունը կազմում է 20.0 կգ ածխաթթու գազ:

Մեկ հերթափոխով աշխատելու դեպքում կշշայցվի՝
24000 հատ (3000x8ժամ) 1.0 լիտրանոց շիշ, այսինքն՝ օրական կօգտագործվի 24000 լիտր կամ $24.0 մ^3$ հանքային ջուր, ամսական՝ $24.0 մ^3 \times 25օր = 600.0 մ^3$, տարեկան՝ $600.0 մ^3 \times 12 = 7200.0 մ^3$:

Երկու հերթափոխով աշխատելու դեպքում կշշայցվի՝
48000 հատ (3000x16ժամ) 1.0 լիտրանոց շիշ, այսինքն օրական կօգտագործվի 48000 լիտր կամ $48.0 մ^3$ հանքային ջուր, ամսական՝ $48.0 մ^3 \times 25օր = 1200.0 մ^3$, տարեկան՝ $1200.0 մ^3 \times 12 = 14400.0 մ^3$:

Երեք հերթափոխով աշխատելու դեպքում կշշայցվի՝

72000 հատ (3000x24ժամ) 1.0 լիտրանոց շիշ, այսինքն օրական կօգտագործվի 72000 լիտր կամ 72.0 մ^3 հանքային ջուր, ամսական՝ $72.0 \text{ մ}^3 \times 25 \text{ օր} = 1800.0 \text{ մ}^3$, տարեկան՝ $1800.0 \text{ մ}^3 \times 12 = 21600.0 \text{ մ}^3$:

Շշալցման արտադրամասի տեխնիկական հագեցվածությունը, ջեռուցման և օդափոխման համակարգերը և այլն, կհամապատասխանեն նմանատիպ արտադրությունին ներկայացվող տեխնիկական նորմերին ու պահանջներին և դրանց օգտագործումը շրջակա միջավայրի վրա չի ունենա բացասական ադզեցություն:

«ՄՎ ՋՈՒԲ» ՍՊԸ-ի գործունեությունից բխող որևէ խնդիր չի առաջանա՝ կապված պատրաստի արտադրանքի տեղափոխման համար օգտագործվող հանքային ճանապարհների, երթևեկության լրացուցիչ բեռնվածության, մուտքի սահմանափակման, աշխատանքի անվտանգության և այլնի հետ:

Շահագործման ընթացքում արտանետումներ չեն առաջանա, ջեռուցումը նախատեսվում է իրականացնել էլեկտրական ջեռուցիչների և օդորակիչների միջոցով:

Վտանգավոր թափոններ չեն առաջանա, օգտագործվող տարան հանդիսանում է անվտանգ կենցաղային թափոն, որը այլ կենցաղային թափոնների հետ մեկտեղ կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Ջրօգտագործում և հրահեռացում

Ջուրը կօգտագործվի աշխատողների կենցաղային կարիքների, ինչպես նաև շշերի լվացման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է, 5

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016 մ^3 ,

N_1 - բանվորների թիվն է - 10,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - $0.025 \text{ մ}^3/\text{մարդ օր}$

T - տարեկան աշխատանքային օրերի թիվը՝ 300 օր:

Հաշվարկը կատարվել է առավելագույն արտադրողականության և երեք հերթափոխով աշխատելու պայմանների համար:

$$W = (5 \times 0.016 + 10 \times 0.025) \times 300 = 99.0 \text{ մ}^3/\text{տարի}:$$

Միջին օրական՝ 0.33 մ^3 :

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$V_1 \times (1 - L)$, որտեղ L - կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$99.0 \times (1 - 0.05) = 94.05 \text{ մ}^3$, միջին օրեկան՝ 0.314 մ^3 :

Սպասարկող անձնակազմը օգտվելու է “Արզնի առողջարան” ՓԲԸ կենցաղային սպասարկման հնարավորություններից:

Արտադրական ջրօգտագործումը կապված է շշերի լվացման հետ: Ըստ նախնական հաշվարկների միջին օրական ջրապահանջը կկազմի՝ 6.5 մ³, տարեկան՝ 1950 մ³:

Կորուստները՝ 2 տոկոս, արտադրական արտահոսքը կկազմի՝

$$1950 \times (1 - 0.02) = 1911.0 \text{ մ}^3, \text{ միջին օրեկան՝ } 6.37 \text{ մ}^3:$$

Ընկերության ջրամատակարարումը իրականացվելու է “Արզնի առողջարան” ՓԲԸ ջրացանցից, կեղտաջրերը միացվելու են առողջարանի կեղտաջրերի մաքրման կայանին:

6.4. Սոցիալական ազդեցություն

Ընկերության կողմից հանքավայրի շահագործումը գործնականում չի ունենա սոցիալական բացասական ազդեցություն, քանի որ չի սպասվում որևէ բացասական ազդեցություն շրջակա մշավայրի վրա: Չի սպասվում բացասական ազդեցություն նաև ճանապարհներից օգտվելու առումով: Ընկերությունը բեռնափոխադրումներն իրականացնելիս այդ ճանապարհներից օգտվելու է օրական մի քանի անգամ՝ գրեթե բացառելով ճանապարհների ծանրաբեռնումը, համայքնի բնակիչներին անհանգստություն պատճառելը, ինչը նշանակում է, որ ճանապարհների գերբեռնվածություն և միջավայրի աղտոտում չի լինի:

6.5. Սանիտարական պահպանության գոտի

Արդեն նշվել է, որ հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, դրա գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունը պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ միտված հանքավայրի պաշտպանությանը աղտոտումից և սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի՝ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Արզնիի հանքային ջրերի հանքավայրի շահագործողական պաշարները սպառումից և աղտոտումից զերծ պահելու նպատակով՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի

1983 թ. փետրվարի 28-ի N 115 «Об утверждении границ округа и зон санитарной охраны курорта республиканского значения Арзни и плана санитарнооздоровительных мероприятий» որոշմամբ սահմանվել են հանքավայրի սանիտարական պահպանության գոտիները (տե՛ս Արզնի առողջարանի սանիտարական պահպանության գոտիների սխեմատիկ քարտեզը, մասշտաբ՝ 1:100000):

Ելնելով այդ պահանջներից՝ երրորդ սանիտարական պահպանության գոտու սահմանագիծը կազմում է 90300.0 մետր, մակերեսը՝ 230.0կմ², իսկ երկրորդ (սահմանափակման գոտի) սանիտարական պահպանության գոտու սահմանագիծը կազմում է 13900.0 մետր, մակերեսը՝ 18.0կմ²:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Սանիտարական պահպանության գոտիներ առանձնացված են ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ ՀՀ նորմատիվ-իրավական ակտերով (տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի 29 նոյեմբերի 2002 թ. N 803 հրամանը և այլն): Իսկ ինչ վերաբերում է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտուն, ապա դրա ընտրության համար հիմք է հանդիսացել նաև նշված հրամանը:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու սահմանը պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում՝ ըստ գործող հրահանգի, սահմանվում է ջրհավաք հորատանցքից ոչ պակաս 30.0մ հեռավորության վրա:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքն անմիջապես հորատանցքերի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս:

Գոտին պարսպապատված է մետաղական ցանկապատով և ապահովված է պահպանությամբ:

Ջրհավաք բոլոր երեք հորատանցքերը (1/62, 3/62, 6/64), որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները, իրենց գլխամասային սարքավորումներով ներառվել են 1983 թ. կառուցված սանիտարական պահպանության

առաջին (խիստ ռեժիմի) գոտիում, որի սահմանագիծը կազմում է 1278.0 մետր, իսկ մակերեսը՝ 28600.0մ²:

Ջրհավաք հորատանցքերը կահավորված են վերերկրյա կառույցով: Իրականացվել է հորատանցքերի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը բացառում է մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի հանքային ջրի ջրհավաք հորատանցքի պահպանմանը:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ, այդ թվում՝ օբյեկտների կառուցումը, մարդկանց մշտական կամ ժամանակավոր բնակվելը, թունաքիմիկատների և պարարտանյութերի տեղակայումը և օգտագործումը, ցանկացած կեղտաջրերի թափումը, լվացք անելը, անասուններին ջուր խմեցնելը, ինչպես նաև գործողություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հանքավայրի հանքային ջրերի և դրանց սանիտարական վիճակի վրա:

Ընդերքօգտագործողը սանիտարական պահպանության խիստ ռեժիմի գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի անձանց մուտքը, որոնք կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ, արգելվում է:

Արգելվում է այլ անձի կողմից յուրաքանչյուր գործունեություն: Դա կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի համաձայնությամբ:

Նշված գոտու տարածքում թույլատրվում են լեռնային և հողային աշխատանքների կատարումը, կառույցների շինարարությունը (կապտածներ, պոմպային կայաններ, ջրագծեր, պահակակետ, ջրի տարաներ), հորատանցքի գլխամասի կահավորման, ավի ամրացնող, հակասողանքային և հակաերոզիոն աշխատանքների կատարումը, որոնք նպաստում են ստորերկրյա ջրերի հանքավայրն ու ջրատար հորիզոններն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու:

6.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնաձին ազդեցության տեսակետից նախատեսվող շշայցման արտադրամասը գործնականում որևէ ներդրում հավաքական ազդեցության վրա չի կարող ունենալ:

7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով, որ «ՄՎ ՋՈՒԲ» ՍՊԸ գործունեության ընթացքում վնասակար նյութերի արտանետումներ և աղտոտված ջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ, չի նախատեսվում, տնտեսական վնասը հաշվարկվել է միայն հողային ռեսուրսների վերաբերյալ:

Հանքավայրի թիվ 6/64 հորատանցքի և ընկերության զբաղեցրած տարածքի 0.1 հա մակերեսի համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն՝ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը,

տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումների:

ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԿԳհող = Աբազա \times Մհող \times Գգ,$$

որտեղ՝

ԿԳհող-ն գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

Աբազա-ն հողերի 1 մ² մակերեսի բազային արժեքն է՝ 400 դրամ,

Մհող-ն գնահատվող հողամասի մակերեսն է 1000 մ²,

Գգ-ն բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է: Արգնի համայնքի գտնվում է VIII-րդ գոտու սահմաններում, որի գոտիականության գործակիցն է՝ 0.0490 (տես կարգի Աղյուսակ 1):

$$ԿԳհող = 1000 \times 400 \times 0.0490 = 19600.0 \text{ դրամ}$$

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = ԾՀՎ + ԱՎՀ + ԾՈԻՎ,$$

որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է,

ԾՀՎ-ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են: Նման ծախսեր չեն նախատեսվում:

ԱՎՀ-ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում՝ ԿԳհող:

ԾՈԻՎ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախազգային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$$Ա = ԾՀՎ + ԿԳհող,$$

$$ԱՎՀ = 0 + 19600.0 = 19600.0 \text{ դրամ}$$

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Հանքավայրի շահագործման հետ կապված հնարավոր արտակարգ իրավիճակների (տեխնածին, բնածին կամ մարդածին) հարցը պետք է քննարկել մի քանի տեսանկյուններից: Բնական աղետների դեպքում դրանց բացասական ազդեցության

ծավալը կախված կլինի աղետի տեսակից և ուժգնության աստիճանից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համատասխան տարածքում սողանքային, սելավային երևույթները բացակայում են, ապա հանքավայրի շահագործման և հանքային ջրի շշալցման ընթացքում այդօրինակ աղետների հնարավոր ազդեցության թե՛ ծավալը, թե՛ ազդեցության աստիճանը պետք է համարել շատ ցածր, պայմանավորված նաև նրանով, որ շինությունների ամրությունը բավականին բարձր է: Հիմնական ռիսկը կապված է երկրաշարժերի հետ, քանի որ Հայաստանը գտնվում է սեյսմիկ գոտում: Սակայն անգամ ավերիչ երկրաշարժերի դեպքում (տարածքում նման երևույթ չի արձանագրվել) հանքավայրի շահագործմամբ պայմանավորված լուրջ բնապահպանական ռիսկեր չեն կարող լինել, քանզի արդյունահանվող ռետուրսը չունի վտանգավորություն, իսկ արդյունահանումը չի ուղեկցվում արտանետումներով ու վտանգավոր թափոններով, ինչպես պինդ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման դեպքում է: Տեսականորեն բացառված չի այն, որ հնարավոր ավերիչ երկրաշարժերի դեպքում (ֆորս մաժորի դեպքում) կարող են շինությունները փլուզվել և խողովակաշարերը շարքից դուրս գան, սակայն դրանց բնապահպանական հետևանքները չեն կարող վտանգավոր լինել:

Հիմնվելով սույն հաշվետվության մեջ ներկայացված բնութագրերի ու հիմնավորումների վրա՝ շրջակա միջավայրի վրա հանքավայրի շահագործման ու հանքային ջրի շշալցման հնարավոր բացասական ազդեցությունը կարող է պայմանավորված լինել առավելապես տեխնածին կամ մարդածին արտակարգ իրավիճակներով: Սակայն դրա ռիսկը նվազագույնի հասցնելու համար «ՄՎ ՋՈՒԲ» ՍՊԸ-ն հանքավայրը շահագործելու ողջ գործընթացում խստագույնս հետևելու է անվտանգության բոլոր կանոններին և պահանջներին: Դա տեղի է ունենալու նաև պարբերաբար իրականացվող մոնիթորինգի միջոցով, որը թույլ կտա պարզել ինչպես սարքավորումների վիճակը, հրդեհանվտանգության ռիսկերը, այնպես էլ տեխնիկական անվտանգության պահանջների հանդեպ աշխատակիցների վերաբերմունքի բնութագրական գծերը: Տեխնածին և մարդածին արտակարգ իրավիճակների դեպքում ևս բնապահպանական ռիսկերը շատ ցածր են, քանզի հանքավայրի շահագործումը, ինչպես նշել ենք, չի ուղեկցվում արտանետումներով և վտանգավոր թափոններով:

Թեև, ինչպես արդեն ակնակրկել ենք՝ սկզբունքորեն բացառված չեն տեխնածին և մարդածին այնպիսի արտակարգ իրավիճակներ, որոնք կապված կլինեն համապատասխան սարքավորումների, դրանց վթարման, ինչպես նաև հնարավոր հրդեհների հետ, այնուամենայնիվ դրանց բացասական ազդեցության հավանականությունը չի կարող մեծ լինել, քանզի համապատասխան սարքավորումներն ունենալու են բարձր որակ և լինելու են նոր ու ժամանակակից, իսկ դրանք շահագործող մասնագետները կլինեն բարձր որակավորում ունեցող: Ավելին, արտադրական ողջ գործընթացը կազմակերպվելու և իրականացվելու է արտադրական գործունեությանը

ներկայացվող բոլոր պահանջներին համապատասխան: Քանի որ այդպիսի գործունեության ընթացքում հիմնականում գործ չենք ունենալու դյուրավառ հեղուկների, քիմիական նյութերի հետ, ապա հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում դրանց բացասական ազդեցությունն ըստ էության կլինի գրոյական: Հիմնական ռիսկը կարող է կապված լինել պլաստմասե տարաների հետ (հրդեհների մասով), սակայն նշենք, որ խստագույնս պահպանվելու են անվտանգության տեխնիկական բոլոր կանոնները և պահանջները, սարքավորումները պարբերաբար ստուգման են ենթարկվելու, իսկ աշխատակիցները սահմանված կարգով հրահանգավորվելու են: Հնարավոր հրդեհը շատ արագ կլոկալիզացվի ու կչեզոքացվի: Իսկ պլաստմասե տարաների պահեստային հատվածում հրդեհի հնարավորության ռիսկերն անվտանգության նկատառումներով կդարձվեն գրեթե գրոյական:

Ի հավելումն ասվածի՝ նշենք, որ հանքային ջրի ջրհավաք հորատանցքի շահագործման աշխատանքների անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները:

Ընկերության ղեկավարությունը պարտավոր է՝

- Աշխատանքի ընդունվող բոլոր աշխատողների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ:
- Երեք ամիսը մեկ աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում՝ անվտանգության տեխնիկայի գծով:
- Տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների ղեկավարման իրավունքի վկայական:

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԱԻԱԼԱՆ ՄԵՂՂՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

9.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է հանդիսանալ շրջակա միջավայրի համար, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64)՝ ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումները՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:

Ջրհավաք հորատանցքի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության և իրավական այլ ակտերի պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.

- պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկում,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ինչպես նշել էինք, Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Հանքային ջրերի հանքավայրերի ջրհավաք հորատանցքերի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքերի լավ տեխնիկական վիճակի, դրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:
2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով՝ բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար:
3. Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՏՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:
4. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
5. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունը ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
6. Ջրհավաք հորատանցքերը կառուցապատել առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիով:

9.2. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիթորինգի) իրականացման պլան

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում ընկերությունը նախատեսում է զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ռեժիմային դիտարկումներ, ինչը թույլ կտա գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.
- 7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,
- 8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 6/64 հորատանցքում և շշայցման գործարանի շրջակայքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն ջրի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակության աղյուսակը):

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Հանքային ջուր	հանքավայրի հանքաջին (Խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 6/64 հորատանցք (տե՛ս նկար 1)	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ, ջերմաստիճան, ծախս	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ	- եռամսյակը մեկ անգամ - 10 օրը մեկ անգամ
Հողային ծածկույթ	շշալցման գործարանի տարածքում (տե՛ս նկար 1)	- հողերի քիմիական կազմ, - հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	տարեկան երկու անգամ

Հանքային ջրերի հանքավայրերի երկարամյա շահագործման փորձը ցույց է տվել, որ հանքավայրի հորատանցքի շահագործման ժամանակ մոնիթորինգի օբյեկտ են համարվում հանքային ջուրը և հողային ծածկույթը:

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի և գազի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները հորատանցքում կկատարվեն 10 օրը մեկ, իսկ ջրի նմուշարկումները՝ եռամսյակը մեկ անգամ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Այս աշխատանքների կատարման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է ծախսել 700.0 հազ. դրամ:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները: Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին հաշվառման և պահպանման:

Եթե հաստատված պաշարների և մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշման պահանջների՝ անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության ընդերքաբանական և նախագծերի տեխնոլոգիական փորձաքննության բաժին օգտական հանաձոնների պաշարների (ՕՀՊ) հանձնաժողովի հաստատմանը:

9.3. Սոցիալական մեղման միջոցառումներ

Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից երկրի բնակչության որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ որոշակի կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնումն է: Այն իրականացնում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության ու ապահովագրության խիստ որոշակի նպատակային քաղաքականություն՝ ուղղված երկրում աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը, բնակչության խոցելի հնարավորությունների ընդլայնմանն ու նրանց որոշակի սոցիալական երաշխիքների ապահովմանը, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը:

Հանքավայրի շահագործումը կունենա բարերար սոցիալական և տնտեսական ազդեցություն ազդակիր համայնքի առջև ծառայած տարաբնույթ խնդիրների լուծման առումով: Դա ամենից առաջ բացատրվում է նրանով, որ հանքավայրի շահագործումը հնարավորություն կընձեռի հաղթահարելու կամ մեղմելու ազդակիր համայնքում գործազրկության հետ կապված խնդիրները (նախատեսվում է ստեղծել շուրջ տասնինգ երկու տասնյակ աշխատատեղ՝ միջինը 200.000 դրամ աշխատավարձով), այդ համայնքում իրականացնելու տարբեր սոցիալական նախաձեռնություններ: Օրինակ՝ տարեկան կտրվածքով համայնքին կտրվի ֆինանսական աջակցություն՝ դպրոցի, մանկապարտեզի և

այլնի հետ կապված խնդիրներ լուծելու նպատակով (առաջնահերթությունները կհամաձայնեցվեն համայնքի ղեկավարության և բնակիչների հետ):

Փաստենք նաև, որ հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են ազդակիր համայնքի բնակիչներին: Քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը:

Ինչ վերաբերում է հանքավայրի շահագործման տնտեսական նպատակահարմարությանը, ապա այն պայմանավորված է մի շարք գործոններով. 1. հանքային ջրերի շուկայում մրցակցության աշխուժացում, 2. աշխատատեղերի ստեղծում և բյուջետային մուտքերի ավելացում, 3. ստացված եկամուտները նաև նոր ծրագրերի իրականացմանը ուղղորդում (տուրիզմի հետագա զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում կամ բարելավում և այլն): Եվ քանի որ ջրհավաք հորատանցքի շահագործման տևողությունը կկազմի 50 տարի, ուստի ազդակիր համայնքը շուրջ 5 տասնամյակ կունենա համապատասխան լրացուցիչ աջակցություն:

Այսպիսով, «ՄՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ն ստանալով Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական շշալցման համար, և իրականացնելով այն՝ կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի շուրջ երկու տասնյակ աշխատատեղ, ինչն իր հերթին կնպաստի տեղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ	Մեղմման համար պատասխանատու
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - աշխատողներն ապահովվում են բանվորական արտահագուստով և օրը մեկ անգամ սնունդով - աշխատողների հետ անցկացվում է նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ - երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացվում է հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով - տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրվում է այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների ղեկավարելու իրավունքի վկայական 	<ul style="list-style-type: none"> - աշխատողներին ապահովել բանվորական արտահագուստով և օրը մեկ անգամ սնունդով - աշխատողների հետ անցկացնել է նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ - երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով - տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների ղեկավարելու իրավունքի վկայական 	«ՄՎ ՋՈՒՐ» ՍՊԸ տնօրեն
2. Հորատանցքի շահագործման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - փոշեզոյացման կանխում հանքային ջրի շահագործման ժամանակ - օգտագործվող տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում 	<ul style="list-style-type: none"> - փոշու և վնասակար ծխագազերի արտանետումներ չեն լինելու - ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորել համապատասխան սարքավորումներով (փականներ, կապարակնքված ջրաչափեր, չափիչ սարքեր) - հանքի տեխնիկան և մեքենաների շահագործում առանց հավելյալ արտանետումների 	ինժեներ-երկրաբան

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ	Մեղմման համար պատասխանատու
	Աղմուկ	- սահմանված աշխատանքային ժամերի պահպանում	- աշխատանքային ժամերից հետո աշխատող սարքավորումների բացառում - մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում	Ինժեներ-երկրաբան
3. Կենցաղային թափոնների գոյացում	- աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում	- աշխատանքային վայրի տարածքում զուգարանի և աղբամանների տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	- աշխատանքային վայրի տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանի և աղբամանների առկայություն	սպասարկող անձնակազմ
4. Բանեցված յուղերի հեռացումից գոյացող թափոններ	- հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտման վտանգ	- յուղերի անվտանգ փոխանցում - լիցենզավորված կազմակերպություն	- փոխարինված յուղերը պատշաճ կերպով պահեստավորված են - փոխարինված յուղերը հեռացված են լիցենզավորված կազմակերպության կողմից	Ինժեներ-երկրաբան
5. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	- ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին աշխատանքների ժամանակ	- երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում	- աշխատանքների հստակ տեսանելի տարածք - կարգավորված երթևեկություն	Ինժեներ-երկրաբան

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ


Գործողություն	Ի՞նչ է (հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)	Ո՞վ է (պատասխանատու մոնիթորինգի համար)
1. Փոշի և ծխագազերի արտանետումների մեքենաների տեղաշարժի ժամանակ	օդի որակ	շտապարանի գործարանի տարածքում, ճանապարհ	գործիքային չափումներ	պարբերական	նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքի համար	համապատասխան արտոնագրված կազմակերպություն
2. Աղմուկ	- աշխատանքային ժամերի պահպանում - ավտոմեքենաների և տեխնի- կայի տեխնիկական վիճակը - աղմուկի մակարդակը (բողոքների դեպքում)	շտապարանի գործարանի տարածքում, ճանապարհ	տեսողական զննում	պարբերական	նվազեցնել անհարմարություննե- ռը անձնակազմի և հարևան համայնքի համար	ինժեներ-երկրաբան
3. Ավտոմեքենաների և տեխնիկայի սպասարկում	- ավտոմեքենաների և տեխնիկայի լվացում համապատասխան ավտոլվացման կետերում	համայնքում	-	-	խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից	սպասարկող անձնակազմ

Գործողություն	Ի՞նչ է (հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ շարունակականությունը)	Ինչու՞ է (հսկվում)	Ո՞վ է (պատասխանատու մոնիթորինգի համար)
4. Աշխատողների առողջություն և անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - աշխատողների կողմից համազգեստի կրումը - սարքավորումների շահագործման օգտագործման կանոնների խիստ պահպանում 	22ալցման գործարանի տարածքում	աշխատանքների զննում	աշխատանքների ողջ ընթացքում	կրճատել աշխատավորների կողմից վնասվածքների ստացման և պատահարների հավանականությունը	«ՄՎ ՋՈՒՐ» ՍՊԸ տնօրեն
5. Սարքավորումների շահագործում և պահպանում	<ul style="list-style-type: none"> - յուղերի հավաքման միջոցների առկայություն տարածքում պատահաբար թափված և արտահոսած յուղերը մաքրելու համար - պատահաբար թափված և արտահոսած յուղերի ժամանակին մաքրում 	22ալցման գործարանի տարածքում	տարածքի զննում	շահագործման աշխատանքների ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - տարածք մտնող անձնակազմի և այլ մարդկանց առողջության համար վտանգների կանխում - սարքավորումների շահագործման ու պահպանության հետևանքով նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից խուսափում - հրդեհի դեպքում վնասի ժամանակին տեղայնացում ու նվազեցում 	«ՄՎ ՋՈՒՐ» ՍՊԸ տնօրեն

Հավելվածներ. տեղեկանքներ, գծագրեր, քարտեզներ

ՍԽԵՄԱ

ածխաթթվային հանքային ջրի ջրհավաք
հորատանցքի գլխամասի



Պ ա յ ը ա կ ա ն ն շ ա ն ն ե ռ

- | | |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> 1. Դորատանցքի բերան 2. Դորատանցքի փական 3. Ճնշումաչափ 4. Ջերմաչափ 5. Գազանջատիչ 6. Գազանջատիչի միջնապատ 7. Ազատ գազի ելքեր 8. Առաջնային ջրահաշվիչ | <ol style="list-style-type: none"> 9. Առաջնային խողովակ 10. Առանձնացված խողովակի փական 11. Առանձնացված ջրահաշվիչ (բուժական նպատակով ընկելադրահունձ օգտագործման համար) 12. Առանձնացված խողովակ 13. Առաջնային խողովակի փական 14. Առանձնացված ջրահաշվիչ (արդյունաբերական նպատակով) |
|--|---|

К о п и я

Министерство здравоохранения СССР
 Центральный научно-исследовательский институт курортологии
 и физиотерапии
 Москва, Кутузовский пр. 4

тел. _____

12390

18 ноября 1966 г.

С П Р А В К А

о кондициях на Арзнинские минеральные воды Армянской
 ССР
 /составлена по материалам Центральной гидрогеологической
 экспедиции конторы "Геоминвод", 1966 г./

Арзнинские минеральные воды, выведенные тремя каптажными скважинами /№№ 1/62, 3/62 и 6/64/ из горизонтов четвертичных андезито-базальтовых вод лав и валунно-галечниковых отложений, являются углекислыми /содержание растворенной CO_2 от 1.8 до 2.1 г/л/, гидрокарбонатно-хлоридными натриевыми / Cl^- - 64-67, HCO_3^- - 25-28, Mg^{2+} - 68-72 экв.%, кремнистыми / H_2SiO_3 - 97-138 мг/л/ с повышенным содержанием магния / Mg^{2+} - 15-18 экв.%, слабо-кислыми /рН-6.4 - 6.6/, холодными /16-20°C/ водами.

По общей минерализации Арзнинские воды разделяются на три группы: с минерализацией 3.9 - 4.1 г/л, 5.1 - 5.4 г/л и 12.1 - 12.6 г/л, отличающиеся также различным содержанием H_2SiO_3 и общей газонасыщенностью /от 1.2 до 4.5 г/л /, что объясняется процессами разбавления основных углекислых минеральных вод пресными водами.

Арзнинские воды могут быть использованы в виде ванн /преимущественно воды скважины № 1/62 и 3/62 - с большей минерализацией и содержанием углекислоты/, для питьевого лечения /воды всех скважин/ и для розлива в бутылки /вода скважины № 6/64/.

Остающийся от лечебных целей и розлива в бутылки дебит вод может быть использован для извлечения углекислого газа в промышленных целях.

п/п: директор института
 Руководитель отдела изучения
 курортных ресурсов
 Руководитель гидрогеологического
 отделения

/Ю.Е.Данилов/


/Г.А.Невраев/

/В.В.Иванов/

afu

ООО "АКФАР"
ИСПЫТАТЕЛЬНАЯ ЛАБОРАТОРИЯ
(Лицензия N AST-001 Q-0077-2000)

Утверждаю
Директор ООО "АКФАР"
М. Ходжакулов



ХИМИЧЕСКИЙ СОСТАВ ВОДЫ

Местоположение скв. (источника) Арун, скв. 6/64
Дата взятия пробы 23.05.2001г.
Условия взятия пробы _____

Основные физико-химические свойства воды:
T° _____ pH 6,6
Прозрачность- прозрачная
Цвет- бесцв. Запах- нет
Наличие свободно выделяющихся газов- CO₂

(самоналив, при откачке, бутылочный режим)

В литре воды содержится			
Катионы	мг	мг/экв	экв%
Литий (Li ⁺)			
Аммоний (NH ₄ ⁺)			
Калий (K ⁺)	не обнаружено		
Натрий (Na ⁺)	1547,44	67,22	70,98
Магний (Mg ²⁺)	194,56	16,00	16,86
Кальций (Ca ²⁺)	232,46	11,60	12,22
Стронций (Sr ²⁺)			
Барий (Ba ²⁺)			
Железо (Fe, сум)	0,10	—	—
Алюминий (Al ³⁺)	0,10	0,01	0,01
Марганец (Mn, сум)	0,20	0,01	0,01
Медь (Cu, сум)	0,0064	—	—
Кобальт (Co, сум)	0,001	—	—
Никель (Ni, сум)			
Свинец (Pb, сум)	0,0016	—	—
Цинк (Zn ²⁺)	0,003	—	—
Ртуть (Hg, сум)	< 0,005		
Молибден (Mo, сум)	0,003	—	—
Кадмий (Cd, сум)	не обнаружено		
Селен (Se, сум)			
Хром (Cr ⁶⁺)	< 0,05		
Бериллий (Be ²⁺)			
Серебро (Ag ⁺)			
Сурьма (Sb, сум)			
Мышьяк (As, сум)	0,15	—	—
Сумма	1425,12	94,90	100,00

22 0002

326

Анионы	мг	мг/экв	экв%
Фторид (F ⁻)	0,80	0,02	0,02
Хлорид (Cl ⁻)	2243,46	63,29	66,69
Бромид (Br ⁻)	6,50	0,08	0,08
Йодид (I ⁻)	0,15	—	—
Сульфат (SO ₄ ²⁻)	317,88	6,62	6,98
Гидрокарбонат (HCO ₃ ⁻)	1512,80	24,80	26,14
Гидрофосфат (HPO ₄ ²⁻)	0,65	0,02	0,01
Нитрит (NO ₂ ⁻)	0,02	—	—
Нитрат (NO ₃ ⁻)	5,00	0,08	0,08
Сумма	4086,74	94,90	100,00

(мг/л)

Диоксид углерода (CO ₂)	1695,80
Кремниевая кислота (H ₂ SiO ₃)	162,60
Ортоборная кислота (H ₃ BO ₃)	44,20
Окисляемость перманганатная (MnO ₂ /л)	
Фенолы	не обнаруж.
Минерализация воды	6268,66
Сухой остаток	

Дата выполнения анализа

23.05.01 - 15.06.01.


Зав. Лабораторией




Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ճ
ՀՀ Կոտայքի մարզի Արզնի ածխաքարային հանքային ջրի
հանքավայրի թիվ 6/64 հորատանցքի
 (հատված K-38-126-B, K-38-138-A թերթերից)
 Մասշտաբ 1:50000

- Թիվ 6/64 հորատանցքի կոորդինատներն են՝
 I. CK-42 կոորդինատային համակարգով.
 X = 4464260 Y = 8465250
 II. ARM WGS - 84 կոորդինատային համակարգով.
 X = 4464253 Y = 8465148

Հորատանցքի բացարձակ բարձրություն՝ 1280.0մ



« ՄՎ ՋՈՒՐ » ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ. Գևորգյան



«ԱՐԶՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՓԱԿ ԲԱՏՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«САНАТОРИЙ АРЗНИ» ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
«ARZNI HEALTH» CLOSED JOINT-STOCK COMPANY

Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Արզնի
Address: Kotayk region, v. Arzni
Հեռ. / Tel. (0222) 6 31 09, քջջ. (093) 88 88 05,
Էլ-փոստ: / E-mail. arznisanatorium@info.am
Վեբ-կայք: / URL : www.arzniresort.am

№ 182 «26» 11 2008թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

«Արզնի առողջարան» ՓԲԸ-ն տալիս է իր նախնական համաձայնությունը «ՄՎ ՋՈՒԻՐ» ՍՊԸ-ին իր գործունեությունն իրականացնելու համար օգտվել ընդլայնարահի խողովակից, հորատանցքի գլխամասի վրա գոյություն ունեցող սարքավորումներից (չափիչ սարքեր, զազանջատիչ և այլն), ինչպես նաև թիվ 6/64 հորատանցքից ընդլայնարահ տանող 2 դյույմանոց տրամագծի խողովակաշարից կատարել ճյուղավորում դեպի հանքային ջրի շշալցման արտադրամաս տեղադրելով խողովակի վրա փական և ջրաչափ:

«Արզնի առողջարան» ՓԲԸ-ն վերյուծել է բոլոր խոչնդոտները և տեղեկացնում է, որ «ՄՎ ՋՈՒԻՐ» ՍՊԸ-ի գործունեությունից բխող որևէ խնդիր չի առաջանա՝ կապված պատրաստի արտադրանքի տեղափոխման համար օգտագործվող հանքային ճանապարհների, երթևեկության լրացուցիչ բեռնվածության, մուտքի սահմանափակման, առողջարանի այցելուների և անձնակազմի վրա ազդուկի, աշխատանքի անվտանգության և այլնի հետ:


«Արզնի առողջարան» ՓԲԸ-ն սեփականությունը հանդիսացող և նախկինում օգտագործվող լվացքատան տարածքն իր օժանդակ շինություններով, որի ընդհանուր մակերեսը կազմում է 450մ², համաձայն է տրամադրել «ՄԵՎ ՋՈՒԻՐ» ՍՊ ընկերությանը վարձակալության՝ շշալցման գործունեություն իրականացնելու համար:

Այն առանձին շինություն է, որը գտնվում է հիմնական մասնաշենքերից մոտ 100մ հեռավորության վրա, առանձնացված է 3մ բարձրություն ունեցող քարե պատնեշով և ապահովված է տեխնիկական ջրով:

«ՄՎ ՋՈՒԻՐ» ՍՊԸ-ն պարտավորվում է 50%-ով փոխհատուցել ընդհանուր օգտագործման խողովակաշարի, հորատանցքի գլխամասի սարքավորումների վերանորոգման ծախսերը, իսկ օգտագործված տեխնիկական ջրինը՝ ամբողջությամբ:

Հայտնում եմ նաև, որ «ՄՎ ՋՈՒԻՐ» ՍՊԸ-ն տեխնիկական ջրերի հեռացման համար օգտվելու է «Արզնի առողջարան» ՓԲԸ-ի շահագործման հանձնվող մաքրման կայանից, որի թույլտվության և շահագործման հանձնելու աշխատանքները գտնվում են ՀՀ Բնապահպանության նախարարության հետ համաձայնեցման փուլում:

«Արզնի առողջարան» ՓԲԸ տնօրեն



Ա.Մահտեյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 28 փետրվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԱՐՁՆԻ» ԱՌՈՂՋԱՐԱՆ ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նոր Գեղի Առողջարանային փողոց 4-րդ փակուղի թիվ 1 առողջարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Հ.Ս.Մ.Ս. 14/05/2005թ.Ո208 որոշում , Մասնավորեցման պայմանագիր 26/12/2002թ. Ս/Մ 5043, Տեղեկանքներ 29/10/2001թ. N 026, 17/12/2012թ. N2/20, Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03-Ա-057273 տրված 21.10.2002թ., Շինարարության ավարտական ակտ, Ճարտարապետաշինարարական նախագիծ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք 02.10.2018թ. թիվ 16, Շինարարության թույլտվություն 19.10.2018թ. թիվ 17, Ավարտական ակտ 10.09.2019թ. թիվ 4, Համայնքի ղեկավարի 30/01/2020թ. թիվ 25 որոշում

ՎԿԱՅԱԿԱՆ N 28022020-07-0071, գաղտնաբառ՝ AY4GJBVCQLG4

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-048-0451-0004

Մակերեսի չափը (հա)՝ 1.4

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Առողջարարական նպատակներով նախատեսված

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-048-0451-0004-001	Առողջարան	3875.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	07-048-0451-0004-002	Պահեստ	48.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	07-048-0451-0004-003	Ցախանոց	88.6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	07-048-0451-0004-004	Կաթսայատուն	335.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	07-048-0451-0004-005	Լվացքատուն	162.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	07-048-0451-0004-006	Ավտոտնակ	102 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	07-048-0451-0004-007	Ենթակայան	28.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	07-048-0451-0004-008	Ջրավազան	76.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	07-048-0451-0004-009	Մասնաշենք	3496.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10	07-048-0451-0004-011	Օժանդակ շինություն	146.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
11	07-048-0451-0004-012	Կաթսայատուն	24.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
12	07-048-0451-0004-010	Ծածկ	14 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ


Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Աբել Բակլաջյան

ՎԿԱՅԱԿԱՆ N 28022020-07-0071, գաղտնաբառ՝ AY4GJBVCQLG4

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով





NINGBO MAMA PAPA EXPORT & IMPORT CO., LTD

ROOM 411-55-9, 4TH FLOOR, TECHNOLOGY MANSION, NO.5 99 JIANGNAN ROAD, HI-TECH ZONE, NINGBO, CHINA
 TEL: 0086-21-36336636 15201839043 EMAIL: ANGELINA@JINBENCN.COM
 SKYPE: JINBENMACHINERY CONTACT: SALLY

COMMERCIAL INVOICE

TO:

ACBA LEASING CREDIT ORGANIZATION CJSC
 ADD: 132-133 PREMISES, 10 VAZGEN SARGSYAN STR.,
 0010, YEREVAN, RA CONTACT: KAREN
 EMAIL: LEASING@ACBA.AM
 TEL: (37410) 31-88-88 (8089)

INVOICE NO.: MP2018S30

DATE: 2019/2/18

MARKS AND NUMBERS	DESCRIPTIONS	QUANTITIES	UNIT PRICE	AMOUNT
SVJUR	FULLY AUTOMATIC BOTTLE BLOWING MACHINE	1SET	US\$53,390.00	US\$53,390.00
	CARBONATED WATER PRODUCTION LINE	1SET	US\$63,610.00	US\$63,610.00
TOTAL FOB SHANGHAI				US\$117,000.00

宁波妈妈抱抱进出口有限公司

NINGBO MAMA PAPA EXPORT & IMPORT CO., LTD

黄敏

ACBA
LEASING



ԱԳԲԱ
ԼԻՉԻՆԳ

ORDER SLIP

Reference: Leasing Contracts N 1811 001-1
Erevan, dated 07 November, 2018

Company: SHANGHAI JINBEN INDUSTRIAL CO., LTD
No.1388, Jiahao Road, Jiading District, Shanghai, China

Dear Sirs,

We confirm our ordering, on behalf of our common customer "SV JUR" LLC equipment hereafter designated, according to your proforma invoice N: PIYE20180926-S1 dated 18/10/18.

List of Equipments:

No	Description	QTY	UNIT PRICE(USD)	TOTAL PRICE (USD)
1	3000L Raw water tank 3000L	1	1980	1980
2	2T/H Water treatment system (pre treatment and RO) SCL-2000L	1	9900	9900
3	2T/H UV UV2T	1	780	780
4	10g O-zone DI0A	1	890	890
5	Pure water tank 2000L	1	1900	1900
6	Pipe, fitting	1	3000	3000
7	Carbonated mixer	1	3500	3500
8	Fully automatic bottle blowing machine HQ2-0.8-3500	1	19000	19000
9	Mould	2	840	1680
10	HP air compressor FH-2.0/30	1	4050	4050
11	LP air compressor	1	1980	1980
12	Cooling dryer HY026GF	1	1000	1000
13	Filter C-002 T-002	2	165	330
14	Chiller AC03	1	1660	1660
15	Air storage tank 0.6/30	1	1000	1000
16	Air storage tank 0.6/10	1	600	600
17	High-pressure pipes fittings	1	550	550
18	14-12-5 3 in 1 filling machine XGF14-12-5	1	21500	21500
19	Dryer	1	4500	4500
20	Bop labeling machine H LML-JY3	1	24200	24200
21	3-5b/min Semi automatic PE film packing machine JB5038	1	4400	4400
22	Ink jet printer 2000E	1	4200	4200
23	Conveyor	10	330	3300
24	Conveyor motor	2	550	1100
TOTAL (USD)				117 000

Total price of equipment:

117 000 one hundred seventeen thousand USD 00 cent.

Terms of delivery:

FOB Ningbo, China.

It is agreed that any delay in delivering equipment above, shall imply ex-officio, and without warning any, or notice, or any other procedure, the payment of interest to the prepayment of our company, i.e.: 0.1% out of non delivered equipment price per one day delay.

上海金奔实业
SHANGHAI JINBEN INDUS
Ms. Qian

Payment terms:

30% paid by T/T as deposit, 70% by T/T before shipment.

Other conditions:

You should provide us with all the necessary documents of the equipment and invoice into the name of ACBA Leasing CJSC. All of the document permanently should be into the name of ACBA Leasing CJSC, in order to avoid problems and troubles at the custom clearance. Please do confirm us your own acceptance of conditions above, and return us these document properly signed.

ACBA Leasing CJSC, BY
General Manager
Arsen Bazikyan



SHANGHAI JINBEN INDUSTRIAL
CO., LTD

上海金奔实业有限公司
SHANGHAI JINBEN INDUSTRIAL CO., LTD
Ms. Qiumian Li

公司
CO., LTD

ՇՇԱԼՑՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

